

ԷՋԵՐ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Պրոֆ. Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ (Բուխարեստ)

ԱԼՄ դ. վերջերուն արևմտահայ գավառը ծառացավ հանկարծ դատախազի մը նման, որ կպահանջե իրմե խլված իրավունքները:

Պայքարի ազդանշանը Մալկարայեն էր որ կուգար:

Հարցարանը՝ զոր «Մասիս» միջոցով հրապարակ կղներ Արտաշես Հարությունյան, հետևյալ շորս հարցումները կբովանդակեր.

Ա. Կկարծե՞ք թե մեր ցեղն ընդունակ ըլլա ճշմարտապես հայ գրականություն մը ստեղծելու:

Բ. Այսօրվան թրքահայ գրականությունը կհամապատասխանե՞ ակնարկված պայմաններով հայ գրականության մը, և Պոլիս՝ թրքահայերու արդի մտավորական կյանքին իբրև գլխավոր կեդրոն՝ ընդունակ եղա՞ծ է և կրնա՞ ըլլալ ալդ գրականությունը երևան բերելու, իր բովանդակ ընդարձակությանն ու կատարելությանը մեջ:

Գ. Կկարծե՞ք որ օրվան սոցիալա-թրքահայ գրականությունը պետք ունենա նոր ձգտումով մը ներշնչվելու, և այս տեսակետեն՝ ի՞նչ ուղղությամբ և ի՞նչ ոգիով կբաղձաք որ կատարվի մեր գրականության բարեշրջումը վաղվան համար.

Դ. Ի՞նչ կխորհիք գավառական գրականության մասին: Ըստ ձեզ՝ գավառական գրականությունն ընդունա՞կ է ակնարկված բարեշրջությունն իրագործելու, թե՛ մեր գրականության մեջ անոր գոյության իրավունքը պեսպիսությունը մը, զանազանություն մը, մասնաճյուղի մը հանգամանքով միայն ընդունելի կնկատեք: Բսկ եթե կընդունի՞ք գավառական գրականության կարելիությունն ու առավելակշռությունը պոլսականին վրա, զուտ հայացի ներշնչումով ու իսկատպությամբ գրականություն մը ծաղկեցնելու ծրագրին իրականացման տեսակետեն, ըստ ձեզ, որո՞նք են այն միջոցները, որոնցմով գավառացի գրագետները գործնական վիճակը պիտի ունենային այդ գրական ծրագիրը իրագործելու: Այդ պարագային, ի՞նչ պիտի ըլլար պոլսեցի գրագետին դերը վաղվան գրականության նկատմամբ, և ի՞նչ կխորհիք իր ապագայի մասին¹:

Արտաշես Հարությունյան «գավառացի գրագետ» էր, առանց սակայն «գավառի գրագետ» ևս ըլլալու: Իր մշակած գրականության լեզվովն ու նյութովը շատ ալ կարելի չէր վայն զանազանել բուն պոլսեցի գրագետեն: Մալկարան արևմտահայ գավառը չէր:

Վաղվան գրականության շուրջ բացված վեճին մեջ ի նպաստ գավառին հայտնած իր տեսությունները շեղոքի մը մտածումներն էին ուրեմն, և չէին կրնար արտահայտիչն ըլլալ գաղափարի ձայնին: Ալդ ձայնը հարբերդեն միայն կրնար գալ, որովհետև հոն էր, որ ընձյուղիլ սկսած էր գավառի հարադատ

¹ «Մասիս», 1900, թիվ 26, էջ 401:

շունչը: Որբերյան, որ մասամբ բերքն էր այդ միջավայրին և եկած հաստատված էր Զմյուռնիա, իր ձայնը հնչեցուց առաջին պահին:

Արդարև, «Մասիսի» հարցարանին առաջին արձագանք տվողներն մեկն եղավ Ռուբեն Որբերյան: Որբերյան մեկն էր գավառացի այն գրողներն, զորս «Խարբերդի դպրոցը» մեղ տվավ: Ծնած Մալաթիա, և իր նախափորձերը բրած 1892-ին, ան ուշագրավ դառնալ սկսավ առաջին իսկ օրեն, իր արձակ ու ոտանավոր էջերով, որոնք իրենց անդրանիկ բեղմնավորումն ստացան Զմյուռնիո մեջ, ուր հաստատված էր պահ մը ուսուցչական պաշտոնով:

Դառնությունամբ հիշելի հետո թե աննպաստ պայմաններու բերմամբ «հայ միտքը մինչև հիմա չէ արտադրած գրական գործ մը, որ դարազուրի մը բանա և կամ կարենա բաղդատության դրվիլ մարդկային հին ու նոր դասական գործերու հետ» և շեշտելի հետո նաև, որ թրքահայ գրականությունը ստվերն անգամ կարելի չէ դասել այն գրականության դոր կրմբուն հարցարանը, որովհետև «Պոլիս, դոր թրքահայերու մտավորական կյանքին իբր կեդրոն կրնգունինք, մինչև հիմա թերթերու մեջ՝ օրը օրին միայն կյանք ունեցող հողվածներով՝ ջանացած է լեզուն մարբելու, կաղմակերպելու», և սակայն չէ տված «հեղինակություն մը, որ զուրս-գործոց մը արտադրելով, վճռական ձև մը տված ըլլա աշխարհաբարին», Որբերյան ծիծաղելի կգտնե, սակայն, ենթադրել «գավառական գրականության առավելակշռությունը պոլսականին վրա», որովհետև, կրսն, «այսօրվան պոլսեցի գրողներն շատեր՝ երեկվան գավառացիներն են ու փոխադարձաբար: Բ՞նչ ըսել կուզվի պոլսական կամ գավառական գրականություն բառերով: Ես միայն մեկ գրականություն կճանչնամ, զուտ տոհմայինը, որուն հիմնվելուն հավասարապես պարտին աշխատիլ պոլսահայն ու գավառացին: Օտար գրականությանց ազդեցությամբ թե՛ պոլսեցի, թե՛ գավառացի գրողին վիժած փորձերը այսօր կամ վաղը պիտի իյնան ժամանակի մոռացման պամբյուղին մեջ: Անոնք մեզի չեն պատկանիր: Գրագետը իր շուրջի ժողովուրդին անցյալն ու ներկան ուշումնասիրելու և անոր ինքնատիպ հատկությունները խուզարկելու է,— եթե մնացած են տակավին,— որպեսզի կարենա ցեղին կյանքովը լեցուն գործեր արտադրելու: Ու գավառը ձանչցողը շատ լավ գիտե արդեն թե հոն բնակիչը նոր նեոչնչումներով պիտի չտխաջնե վաղվան գրականությունը: Մեր ժողովուրդը արդեն երբեք տեղ մը ինքնատիպ մնացած չէ: Զայն շրջապատող տարրերը իրենց գույնը ու շատ անգամ ալ իրենց լեզուն տված են անոր: Պոլիս, կամ գավառը, վաղվան գրականության աշխատավորը իր կյանքը պիտի նվիրե բեկորներ հավաքելու, տարրական նյութեր, թեև շատ դժվարությամբ աններով, որպեսզի մեզի հաջորդող ուրիշ սերունդներ կարենան դանոնք գրականության մեջ հալեցնել: Ամփոփելով գաղափարներս, կեդրակացնեմ թե գրական ուժերի բաժանում չենք բնդունիր: Պոլսահայ կամ գավառական անունով գրականություն չենք ձանչնար: Առաջնորդը՝ տաղանդն է, ըլլա Պոլիս, ըլլա գավառը»²:

Որբերյանի տեսակետները հեռու էին ամուր կռվան մը ըլլալե վաղվան գրականության ախոյաններուն համար: Լինհրածեշտ էր, որ իրենց մտածումները պարզեին այն դույզ մը գրչի վարպետները, զորս Խարբերդը բնծա էր տված հայ գրականության՝ բուն վարպետը նախ՝ Թլկատինցին, և իր տաղանդավոր ձևոնասունը՝ Ռուբեն Զարգարյան:

² Նույն տեղում, թիվ 31:

Թլկատիցին լուռ մնաց: Ի՞նչ փուլթ. իր գրական վաստակը մեջտեղն էր իր բովանդակ շքեղությամբ: Հայն իրենց հենարան կրնային առնել գավառի գրականության ջատագույնները:

Ռուբեն Զարդարյան ասույարեղ իջավ իր պատասխանովը: Այդ պատասխանին մեջ անիրավված գավառին բովանդակ ցասումը կար, և երիտասարդության մը,— Զարդարյան հազիվ 25 տարեկան էր այն ատեն,— հանձնապաստան, բայց կորովի շեշտը, որ վեճը տաքցնելու կրնար ծառայել ավելի՝ քան դատ մը շահելու:

Պարզելե հետո տոհմային հայ գրականության մը ստեղծման նախապայմանները և հռչակելե հետո իր հավատքը ի մասին «մեր ցեղին ճշմարտապես հայ գրականություն մը ստեղծելու ընդունակությունը», Զարդարյան արդեն թիրախ կդարձներ իրեն պոլսեցի գրագետն ու անոր մշակած գրականությունը:

Շատ մոայլ գույներու տակ կներկայացնե Զարդարյան այն օրերու արևմրտահայ գրականությունը.

«Այսօրվան թրքահայ գրականությունը— լոկ մայրաքաղաքի մարդուն սեփականություն— սահմանավորված լրագրական թոուցիկ ու առօրյա արտադրության մեջ, ունենալով հրատարակված ու հրատարակելի դասագրքերն ալ իր հետ իբրև մաս՝ ընդհանուր ամբողջության օղակված՝ հարևանցի դատողությամբ մը իսկ հայտնի կցուցնե մտավորական անընդունակ ձգտումի, ցեղային կորովամիտ ու կանխապատրաստված գիտակցության, զգացված ու մարզված համոզման մը բացոլող չբավորություն՝ երևան բերելով անհարազատ պեսպիսությունը, ուր ամեն առարկա ու ամեն մանրամասնություն, գորգի ավելեն սկսած մինչև ոտքի ետին խոփկը օտարինն են ու օտարի ապրանք՝ խառնափնթոր տակնովրայություն մատնելով թե զանոնք դասավորող գրիչը անոնց գործածության կերպեն ու գեղեցկագիտական հմտութենեն իսպառ տեղյակ չէ արդեն»:

Այդ տխուր պատկերը ապրող գրականության մը մեջ որևէ կենսունակություն չի գտներ Զարդարյան և կըսե. «Տույց տվեք մատով բանաստեղծական կտոր մը՝ արձակ թե հանգավոր, նորավեպ մը, ընկերական ու տնտեսական հողված մը, ուր տոհմային արվեստի մը թրթռումը կամ անոր հոգեկան տրամադրություններուն մեկ բյուրեղը, անոր ընկերական վիճակն ու աշխարհայեցողությունները, վերջապես օրվան ու ժամանակին հետ կերպարանափոխված կյանքի պահանջներուն բավարարությանը համերաշխված հայտնություն մը փողփողի»:

Այդ պայմաններուն մեջ Պոլսո գրականությունը և իր մշակները չեն կրնար շնչել առանց գավառին:

«Բանասիրական ունե նյութի համար,— կըսե Զարդարյան,— հարկ է գալառին դիմել միշտ. բանաստեղծական, վիպական ունե գործ, ցեղական փոլով, գավառեն ու միմիայն գավառեն սպասելե ետք տրամաբանական է, կարծենք, որ եղրակացնենք թե Պոլսո գրողները ընդունակ չեն— ինչպես որ եղած ալ չեն— առաջադրված գրականությունը երևան բերելու իր բովանդակ ընդարձակությանն ու կատարելության մեջ»:

3 Նույն տեղում, թիվ 40, էջ 629—632:

Իր եղրակացության մեջ Զարդարյան այն համոզումը կհայտնե, թե «Պոլսեցի դրագետը մինչև այդ վաղվան գրականության նախընթացը պետք է միակ նպատակակետ մը ունենա՝ նպաստել գավառի գրականության ծլարձակումին ու անոր զարգացման՝ բոլոր այն կարելի միջոցներով, զորս տրամադրելի ունի այժմ և զորս լայնորեն կրնա գործածել անհրաժեշտության մը իրականացման համար. ու այս իսկ պիտի կազմե իր իմաստության ու խելահաս կանխագիտության բոլոր փառքը»:

Հարցարանին հրապարակ դրվելեն հետո ինը ամիսներ անցեր էին արդեն, և Պոլսո հայ գրողներեն ոչ մեկը հոժարեր էր պատասխանել առաջարկված հարցերուն: Արհամարհանք նկատեք թե վեճի մտնելն պարզ խուսափում մը ալս վերապահությունը Պոլսո հայ գրականության այն օրերու ջոջերուն մոտ, իրականությունն այն էր, որ բանավեճը զրկված մնաց զայն հարուցանողներու սպասած կարևորությունն, և գրական Պոլիսը, հանձին իր հեղինակավոր դեմքերուն, անտարբեր մնաց դեպի վեճ մը, որ այնքան սերտ էր կապված Պոլսո հայ գրականության վարկին հետ: Այնպես որ չգիտցանք թե ինչ կմտածելին, հարուցված տեսությունց մասին, օրվան հեղինակությունները:

Միակ դեմքը, որ պայքարի դաշտ իջավ, Ռեթեոս Պերպերյանն էր: Զգիտենք մեծանուն հայ դաստիարակը և հնավուրց գրողը ի՞նչ շափով արտահայտիչը կրլար գրչի իր եղբայրակիցներուն. ստույգ է սակայն, որ ան ասպարեզ կուգար կուրծք տալու համար Պոլսո դեմ արձակված նետերուն և տեր ու պաշտպան կանգնիլ գրականության մը, որուն ծոցին մեջ ինք ևս գրիչ շարժեր էր երեք տասնյակ տարիներն ի վեր: Հոգվածը, զոր ան լույս ընծայեց այդ առթիվ⁴, պատասխան մը չէր միայն հրապարակ դրված հարցումներուն, այլ տեսակ մը ինքնապաշտպանության փորձ այն հարձակումներուն դեմ, որոնց թիրախ էր դարձած Պոլսո հայ գրականությունը, և բնականաբար ինքն ալ հետը:

Պերպերյան տեր կկանգներ Պոլսո՝ անոր մշակած գրականության հասցեին ուղղված կշտամբանքներուն դեմ:

«Պոլիսը թրքահայ գրականության համար կեդրոնի մը առաջնորդող դերն ունեցած է և ունի ցարդ: Ասիկա զարմանալի չէ անշուշտ: Մայրաքաղաքին մեջ, որ նաև հայոց տոհմային-եկեղեցական համայնքին կեդրոնը եղած է, ապրող ստվար հասարակություն մ'իհարկե պիտի ունենար այդ առավելակշռությունը, ոչ միայն տոհմային-եկեղեցական հեղինակության տեսակետով, այլ նաև մտավորականին, որ կեդրոնին ունեցած քաղաքակրթական առավելություններով անշուշտ պիտի ըլլար ավելի զառգացյալ: Օտարաց հետ շփման դյուրություններով, զոր մայրաքաղաքը, մանավանդ Պոլսո պես ծովեղերյա մայրաքաղաք մը կրնծայե, պոլսահայը իհարկե նվազ ինքն իր մեջ ամփոփված պիտի մնար, եվրոպական զարգացյալ գաղափարք ու սովորույթք մուտ պիտի գտնեին իր մեջ, իր տեսությունները պիտի բարեփոխվեին ու ընդլայնվեին, իր զգացումները պիտի նրբանային ու բաղմաղանեին, և իր կենցաղը, իր նախկին սյարդությունը կորսնցնելով. նորանոր պետքերով ու պահանջումներով բաղմբանգ ճոխություն մը պիտի ստանար: Իր շինած գրականությունն հարկավ, արձագանք իր կյանքին, պիտի կրեր իրեն հատուկ նկարագիր մը, որ իր դավառացի եղբայրներուն քիչ մը տարօրինակ ու կնճռուտ և հետևասինս

⁴ «Մասիս», 1901, թիվ 10, էջ 145—151:

օտարադէմ պիտի երևեր, ինչպէս, պետք է ըսել, քիչ շատ ամեն մայրաքաղաքի գրականութիւն տարօրինակ ու խառնակ կերեւի երկրի ներքին նահանգաց ցեղակից բնակիչներուն»:

Պերպերյան սխալ կգտներ նույնպէս Պոլսո հայ գրողներուն զլանալ պատիւը հարազատ հայ գրականութեան մը մաս կազմելու, միմիայն անոր համար, որ անոնք ստեղծագործած են հայ հողէն հեռու և չէր ընդուներ, որ Պոլսո մեջ մշակված գրականութիւնը խորթ ըլլա հայ հոգիին: «Կարելի՞ քան է,— կըսէ,— սովորաբար հասարակութիւն մը, որ միշտ հարաբերութեան մեջ եղած է իր տոհմային եղբարց հետ, որ իր միջավայրին մեջ առանձնահատուկ կրօնային-տոհմային կյանք մ'ունեցած է և նույնիսկ այդ տեսակետով կեդրոն մը եղած գավառական վիճակներուն, կրնա՞ իր ցեղային հատկութիւնները կորստված ու գլխովին օտարացած հատված մը նկատվիլ: Զարգացած, բարեշրջված է, ինչպէս միևնույն ազգացութեանց տակ պիտի ըլլային գավառացի գրողներն ալ, բայց ներքնապէս նույն ցեղն է միշտ: Բանիբուն ընթերցողը նույն էական հատկութիւնները ու թերութիւնները պիտի գտնէ պոլսեցի ու գավառացի հայերուն մեջ, ինչպէս հասարակաց ունին դեռ շատ մը նախապաշարումներ, աստիճաններ, ավանդակներ ու սովորութիւններ»:

Մյուս կողմէ Պերպերյան սխալ կգտներ հայ հոգին վերապահել միայն գավառին, և գրական ստեղծագործութեանց շրջագիծը սեղմել.

«Որքան ավելի սխալ մ'է կարծել— ինչպէս գավառական շրջանակներու մեջ միտում մը սկսած կերեւի խորհելու— թէ տոհմային գրականութիւնը գրեթէ միայն ցեղային հին նախապաշարմանց, սովորութեանց, առածներու, հեքիաթներու ու ռամկական երգերու հավաքմանց մեջ կկայանա: Նախ զասոնք հավաքելը բուն գրականութիւն ընել չի նշանակեր. եթէ մեր պառավները քիչ մը գրել կարողալ գիտնային, այդ գործը լավագոյնս պիտի գիտնային ընել իրենք: Զեմ ուրանար ասոնց մեծ կարեւորութիւնը ազգագրական, հնախոսական ու մինչև իսկ գրական տեսակետով, վասնզի ժողովրդական անգիր գրականութիւն մը ի հայտ կրբերն ու նույնիսկ ատաղձներ կրնան մատակարարել գիտնական գրականութեան մը: ...Ուրիշ բան է, երբ ձեռնհաս գրողներ գավառական ավանդութեանց մթերքէն հում նյութեր քաղելով՝ անոնցմէ արվեստին ճարտարութիւններով զարդարված գեղեցկագիտական գործեր դուրս կրբերն, կամ պարզապէս գավառին կյանքը իր բնութեան շրջանակին մեջ հրապուրիչ ու կենդանի ոճով մը մեզ կներկայացնեն, ինչպէս ըրած է Սրվանձտյանց, ու ինչպէս կընեն Խլկատինցին, Ռ. Զարդարյան, Գեղամ իրենց տեղական բարբերու ու դեմքերու գեղեցիկ պատկերներուն մեջ: Սակայն նույնիսկ այս ձևով գրվածքներ և դեռ միևնույն շինվածանյութին քաղված ավելի երկարաշունչ վիպական գործեր, ինչպէս կերպովի, չեն կրնար հավակնիլ միակ հարապատ ներկայացուցիչներն ըլլալ տոհմային գրականութեան մը ու իրավունք տալ արհամարհանքով նայելու կեդրոնին մեջ ի հայտ եկած գրական գործունէութեան»:

Պերպերյան չէր մոռնար խոսքի նյութ ընել նաև բարբառի հարցը: «Գավառի լեզուներն ալ,— կըսէր,— պիտի մնան գավառական տեղական բարբառներ, ցորչալի կա կազմյալ կեդրոնի գրական լեզուն իր ընդհանրականութեան տիրող հանգամանքով: Ի՞նչ օգուտ այսինչ գավառաբարբառին հատուկ բառերուն ու ոճերուն ճոխութիւնը, մի ուրիշին այս կամ այն ձևերուն լեզվաբանական տեսակետով բարձրագոյն հնութիւնը կամ հարազատութիւնը:

Անոնք վիճակված են մասնավոր շրջանակի մը մեջ գործածելի ու հասկնալի ըլլալու վիճակին: ...Ոչ թե գավառաբարբառը իրար հետ կձուլվին ազգի մը մեջ գրական լեզվի միություն մը հառաջ բերելու համար, այլ անոնցմէ մին բացառիկ կարևորություն մը ստանալով իր գրաված գիրքեն, ընկերային և երբեմն ալ մատենագրական պարագաներէ, իր քույրերուն մեջ տակաւ առաջնություն մը ձեռք կբերէ, կբարեշրջվի, կգարգանա ու վերջապէս տիրող ընդհանրացած լեզու կդառնա»: «Այսօր անկարելի է չխոստովանիլ, որ պոլսահայ գրագետներու միջոցով մշակված գրական աշխարհարարը գեղեցիկ, ներդաշնակ, ձոխ, բազմերանգ ու ճկուն լեզու մը եղած է, ու դայն կգրեն դարձյալ գավառացի մեր գրողներն ալ, խնամով ուսումնասիրելով ու ջանալով յուրացնել անոր բացատրութիւնքն ու կերպերը, մինչև անոր ամենավերջին նորութիւնաց մեջ հետեւելով անոր: Եթէ մերթ ընդ մերթ, քիչ թե շատ տեղական գոյն մը տալու համար ոճին՝ երբ գավառական դեմք ու պատկեր մ'է իրենց նյութը, կդիմեն գավառական ասութիւնաց, սակայն ամենամեծ մասամբ պոլսական ընտիր աշխարհաբար մը կտիրէ իրենցմէ լավագոյններուն գրութիւնաց մեջ»:

Պերպերյան ի վերջո կհանգեր այն եղրակացութեան, թե հայ գրողը հարադատ արտահայտիչը պետք է ըլլա միջավայրին ուր ան կշնչէ և հայ գրականութեան խորթ պետք չէ սեպել որեւէ տաղանդավոր երկ՝ ինչ միջավայր ալ ցոլացնէ ան: «Եթէ, կամա թե ակամա, իր ցեղին հոգեբանութիւնը կցոլացնէ գրագետն իր գործին մեջ, ուրեմն հայացեղ գրագետը նույնը պիտի ընէ ուր որ ալ գտնվի, Պոլիս ըլլա այն, թե Խարբերդ»:

Երկու ըմբիշներն ալ, որ դեմ դիմաց մնացեր էին՝ երկու կողմերու ներկայացուցիչները չէին իրականին մեջ: Մեկը՝ Ա. Հարութիւնյանը, գավառի դատին գրողակալիւրը, կապրէր Պոլսո քիթին տակ, Մալկարայի մեջ, հայ բնաշխարհէն ավելի հեռու, քան թե Պոլիսը, օտար գրականութեամբ ավելի սնած, քան որեւէ պոլսեցի գրող և գավառացի գրողներու հետ հոգեպէս միայն կապված՝ ինչպէս կապված էին շատերը Պոլսո մեր գրողներէն: Մյուսը՝ Ռեթեոս Պերպերյանը, պոլսեցի գրող էր իսկապէս, բայց կշնչէր սերունդ մը առաջվան մտածումներով, խորթ այն հուղումներուն, որոնցմով կբաբախէր Պոլսո գրականութիւնը Արփիարենն ու Զոհրապեն, Բաշալյանենն ու Կյուրճեանենն ասդին, ու իր լեզվով ևս դեռ կառչած իր օրերուն, երբ դեռ հարգի էին գրաբարի համեցուկները, ինչպէս գաւառացոյն, ձեռոց, հաւաքմանց, պայմանաց և ալին:

Պատասխանը⁵, զոր Արտաշէս Հարութիւնյան կուտար Ռեթեոս Պերպերյանի, ազդանշան էր արդեն ճակատ առ ճակատ կուլի մը: Գավառն էր արդեն, որ Պոլսո դեմ կծառանար:

Արտաշէս Հարութիւնյան իր սույն պատասխանին մեջ գավառի դատախազը կփորձէր հանդիսանալ Պոլսո հավակնութեանց դեմ, որոնց դեմ այս անգամ կճակատեցնէ գավառի հավակնութիւնները:

Շեշտելով անգամ մը ևս, թե հայը ընդունակ է ինքնահատուկ գրականութիւն մը ունենալու, դայն ստեղծելու իրավունքը բացառապէս կվերապահէ գավառին, «ուր մեր ցեղը ավելի ինքնուրույն կյանքով մը ապրած է ու կապրի, քան Պոլիս կամ որեւէ գաղթավայրի մեջ», մինչ «Պոլիսը հայ մտքին կեդրոն կրնա ըլլալ, բայց երբեք՝ հարադատ ներկայացուցիչը՝ անոր նկարագիրներու

⁵ Նույն տեղում, թիվ 14, էջ 217—221:

առանձնահատկություններուն: Պոլիս կեդրոնն է այլասեռ բարքերու, որոնք իրենց կնիքը կդրոշմեն անխուսափելի կերպով բոլոր այն դուրսեն եկած տարրերուն վրա՝ որոնք իրենց ազդեցության սահմանին մեջ կիյնան: Պոլսեցի հայը մեծապես կտարբերի գավառացի հայեն: Պոլսական միջավայրին մեջ՝ հայ տարրը աշխարհաքաղաքացի ընկերության մը ազդեցությունը կրած է: Հարությունյան կըսե. «Պոլսահայուն կյանքը մեկ զեղծ վառիանքն է միայն եվրոպական կյանքին: Տոհմային նկարագիրը մեծ խաթարումներ կրած է հոն, տեղի տալու համար օտար բարքերու մակընթացության: Ու պոլսահայ գրականությունն ալ, մասամբ ընդօրինակություն ֆրանսական ռոմանդի՞ դպրոցին արտադրություններուն, արտահայտությունը եղած է այդ պիտակ ու օտարացած կյանքին: Խնդիրը Հոհրապի մը, տիկին Տյուսաբի մը, Պեշիքթաշլյանի մը տաղանդները վիճելի ներկայացնել չէ բնավ: Բայց ասոնք միայն հայերեն գրող գրագետներ են առավելապես, ինչպես Եղնիկը՝ իր ժամանակին մեջ: Պոլսահայ գրականության վրա ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն մը՝ ավելի շեշտված ձևի ներքև երևան պիտի բերեր թե իսկապես անիկա հեռու եղած է հայ կյանքին հանգամանքներուն արտահայտությունը ըլլալէ՝ գրականության ձևին ներքև»:

Պերպերյանի պատասխանեց Ռուբեն Զարդարյան ալ՝ Ու հիմա ան արդեն կխոսի «մենք»ով, այսինքն հանուն գավառին, և իր հոգվածին մեջ, որ «Մեր պահանջը ինչ է» խորագիրը կկրե՝ կպնդե միշտ հանուն գավառին, թե «մայրաքաղաքի հայ համայնքը կորսնցուցած է իր ցեղական հատկություններեն այն ամեն տարրերը, որոնք կպահպանվին բնագավառին ու անոր բնակչության համայնական ամբողջությունը մեջ, ուրեմն անժամանակ կարծիք մը կամ անիրավ խոստովանություն մը չէ հաստատել, թե պոլսական գրականությունը՝ իբրև ցուրդ զինքը արտադրող գրականության՝ եղած է եթե ոչ բոլորովին «օտարահամ», «օտարահոտ», «օտարած», այլ գեթ մեծ մասով»:

Անդրադառնալով հետո Պերպերյանի այն տեսակետին, թե Պոլիսը, օտարացած հատվածի մը չվերածվելու համար, կարիք ունեցած է և ունի գավառի հետ մշտական շփումի մը, Զարդարյան կըսե.

«...Մենք չենք ժխտեր պոլսական գրականության մասնակի արժեքը ու հետևաբար իր սահմանին մեջ ալ շահեկանությունը. մայրաքաղաքի համայնքը մեր ամբողջությունեն կտուր մըն է ու հետևաբար իր կյանքը, զայն ցուացնող գրականությունը ու իր ընկերական, մտավորական, հոգեկան երևույթները մեղի համար ամեն պարագայի տակ շահագրգռական. ատով հանդերձ երբեք այդ աղապատանքը մեղ չի տկարացներ՝ իրեն վերագրելու այն տեսակ կարողություններ ու տալու այն կարգի պաշտոններ՝ որոնց կիրառությունը համար ձեռնհասություն չունի ու չի կրնար ունենալ կամա ակամա: Խողեք ուրեմն, որ ժամանակը այս մասին իր արդարությունն ու իրավունքի կետը ճշտե և վաղը սկսի «վաղվան գրականությունը»:

Զարդարյան կփորձե ցույց տալ, թե Պոլիս «օտար գրականություն» մը միայն մշակած է, թե գավառացի գրողը միամտությունը չունի տոհմային գրականության մը հետ շփոթելու հին նախապաշարմանց, սովորություններու, առածներու, հեքիաթներու հավաքածուներու հետ, թե արևմտահայ աշխար-

6 Նույն տեղում, թիվ 16, էջ 249—252:

հաբարը չկազմվեցավ միայն գրաբարի շտեմարանեն իր քաղած ատաղձովը՝ այլ զավառներեն ևս իր ծծած նպաստով։

Զինաթափ ըլլալ չէր ուղեր սակայն Պոլիս և պատասխանելու համար «գավառացի ընտրելագոյն գրիչներեն» ումանց առարկություններուն իր առաջին հոգւածին առթիւ, Ռեթեոս Պերպերյան կրկին հրապարակ կիջներ⁷, մասնավորապէս ծանրանալով լեզվական ու բանասիրական հարցերու շուրջ արծարծված տեսակետներու, և աշխարհաբարի ստեղծման մեջ Պոլսո և գավառի ունեցած դերին վրա, և անգամ մը ևս անհեթեթ գտնելով այն տեսությունը, թե հարազատ հայ գրողներու շարքը պետք չէ ներմուծել հին ու նոր մեր այն հեղինակները, որոնք ազդեցություն կրած են օտարեն և կամ որոնց նյութը հայ միջավայրեն քաղված չէ, Ռեթեոս Պերպերյան խորհուրդ կուտար իր կարգին վաղվան գրականութեան ջատագովներուն աշխատիլ «ի լոյս բերել այդ գրականությունը, որու հայաբուն ատաղձներն առատորեն իրենց տրամադրութեան տակ ու հոգեբանական և կաղմախոսական տարրերն իրենց արյան և ուղեղին մեջ ունենալ կպարծին», բայց մինչև այն ատեն «ավելի լավ է որ ունայն վիճաբանություններ չի գրգռեն, մեճֆ-ի և Ղուֆ-ի պառակտող խնդիրներ չհարուցանեն, ավելի համեստ ու նվաղ հավակնահեղց ըլլան, առանց մեծաբանութեան ու աղմուկի՝ իրենց հատուկ միջոցներուն ու հատկութեանց նպաստը բերեն աշխատողներուն, իրենց անժխտելի տաղանդները մշակել և զինքեանս կատարելագործել ջանան փոխանակ այլոց ըրածն աղարտել հետամտելու, պղատոնական գաղափարողի հովեր առնելու և գրական-լեզվական առավել կամ նվաղ մտացածին ծրագրեր բանաձևելու...»։

Շփոթ էր Զմյուռնիո դիրքը այդ պահուն։ Ամբողջ դար մը Պոլսո հետ քուլեր էր ան կողք-կողքի. բաժներ էր անոր հոգերը, ու մասնակցեր անոր ճիգերուն. գրեթե միասին էին ստեղծեր նոր աշխարհաբարը, ու իր գրողները մաս կկաղմեին Պոլսո գրական սերունդին։ Մատթեոս Մամուրյան, օրինակ, սյուններն մեկն էր հանդիսացեր արեւմտահայ նոր գրականութեան, ու իր «Արեւելյան մամուլը» ի սպաս էր գրած անոր։

Բայց մյուս կողմն գավառի դուռն էր Զմյուռնիան, ու գավառի հուղումները դուրին կրնային արձագանք գտնել Մամուրյանի թերթին մեջ։

«Տակավին անկարող եղած ենք ըմբռնելու թե ի՞նչ նշանակութիւն և ի՞նչ նպատակ կրնա ունենալ մեր օրերը զավառական կոչված գրականութիւնը։

«...Մանր մունր հատվածներով, ուսումնասիրական թեթե տեսութիւններով չէ որ գավառական գրականութիւն մը կարող է նոր, կենդանի և ուկեղինիկ երակներ բանալ մեր հին ու դառամ համարված գրական մարմնոյն վրա, ո՛չ, այլ բանահայտական կամ իմաստասիրական կամ հնախոսական և այլ հոյակապ հեղինակութեանց հրատարակութեամբ, գավառական կոչված ոճով»։

Արտաշես Հարութիւնյան, որ հորցարանը նախաձեռներ էր և որ խոստացներ էր եզրակացութեամբ մը փակել վիճաբանութիւնը, ստիպվեցավ ի վերջո ընդունիլ, թե «այդ եզրակացութիւնը իր բնական ճամբեն շեղած է։ Պատճառն այն է, որ ձեռնարկը գրեթե վրիպանք մը եղավ, ու փոխանակ վաղվան գրականութեան վրա բնութիւն մը կատարվելու, վիճաբանութիւն մը միայն

⁷ Նույն տեղում, թիվ 19, էջ 289—294։

⁸ «Արեւելյան մամուլ», 1899, թիվ 19։

տեղի ունեցավ», «անոր համար, որ մեր ամենն մեծահամբավ գրագետներն իսկ տակաւին չեն հասկցած թե ի՞նչ է լրագրական enquête մը, քննութիւն մը, և ի՞նչ եղանակով կ'աւտասխանվի անոր»⁹։ Ան կ'ավելացնէր, թե Պոլսո գրական դեմքերն քիչերը միայն բարեհաճեցան պատասխանել հարցարանին, այնպէս որ գրավե՛ն ուրիշ բան չեղավ, բայց եթէ «շփոթ ու խլացուցիչ աղմուկ մը», ուր «գրական ֆանթազիի ու գրական ժամանցի բոլոր թնթեք-մտութիւնները շինալվեցան հասարակութեան համբերատարութեան, նույնիսկ իրենց քմահաճոյրին մեջ խնդրին լրջութիւնը արհամարհելու և ծաղրելու ողորմելիութեան մը ախտանշները ցույց տալէ չզուլանալով»։ Հարցարանին հեղինակը ի վերջո կ'երկարացնէր, թե վաղվան գրականութեան խնդիրը վերջ չի դրոնէր այս կերպով, «վասն զի ոչ ոք, առանց տկարամտութեան, իրավունք պիտի կրնար ունենալ աս ու ան արգիլել ջանալու՝ մեր գրականութեան հոռի ձգտումները քննադատելու և մտածման նորագոյն հորիզոններ ու գրական նորանոր արշալույսներ մատնանշելու տրամադրութեան մեջ»։

Վաղվան գրականութեան շուրջ հարուցված վեճը գիտական վիճաբանութիւն մը չէր անշուշտ։ Ան տեսակ մը հրապարակագրական բանակոծի էր՝ զոր մղեցին գավառի գրականութեան ջատագոյնները Պոլսո այն գրողներուն դէմ, որոնք ամեն պատվաստ դարձան միայն կ'հոգեբանին ընդունիլ։

Հնաբավո՞ր է ուրոյն գրականութիւն ստեղծել գավառի մեջ։ Այս կ'ըսէ, որ կ'վրիպեր վաղվան գրականութեան հարցը արծարծողներու ուղղորդե-նեն։

«Վաղվան գրականութեան» հարցը արծարծողները կ'մոռնալին արդարեւ, որ եթէ Պոլիսը արեւմտահայ գրականութեան կեդրոն և խարխախ հանգիստացեր էր՝ դիպածին չէր պարտեր ան այդ բանը։

Եթէ հաշատուր Աբովյան Երեւանը դարձուց արեւելահայ գրականութեան օրրան և անոր բարբառը պարտագրեց այդ գրականութեան՝ պայմանները բոլորովին տարբեր էին հայ ժողովուրդի ռուսահայ հասովածին մեջ։ Թիֆլիս հոգեւոր կեդրոն չէր դեռ ռուսահայուն, և իր տեղական բարբառը գրական լեզու դառնալու հավակնութիւն չէր կրնար սնուցանել։

Արեւմտահայ գավառներն ո՞րն էր, եր ի վիճակի պիտի ըլլար ռահվիրա դառնալ բոլոր մյուսներուն։

Վաղվան գրականութեան ռահահայրդները շփոթած էին ճշմարիտ հայ գրագետները չեկելու ատեն ալ։

Տեղը չէ ծանրանալ մոլորութեան վրա, զոր վաղվան գրականութեան ջատագոյնները հրապարակ կ'ընէին, հալեցի հայ գրողներու շարքն վտարելով օրինակ, Պեշիկթաշլւանը, Տիւսաբը, Զոհրապը անգամ, թեւ առանց հանդիմանելու կ'սկսածի ենթարկել անոնց տաղանդը։ Իրենց գլխավոր փաստը այն էր, որ անոնց գրականութիւնը «արեւմտայտութիւնն է այն պիտակ ու օտարացած կ'ընթին», զոր իրենց օրով կ'ապրէր Պոլիսը։

Վաղվան գրականութեան շուրջ վեճը արծարծողներուն խոցելի կողմերն մեկն ալ այն էր, որ անոնք հստակ ըմբռնում մը չունէին գավառի գրականութեան մասին՝ որուն գրողակերպները կ'հավակնէին հանգիստանալ։

⁹ «Մասիս», 1901, թիվ 26։

Նույն իսկ ինքը, Արտաշես Հարությունյան, որ վաղվան գրականության ռազմիրայի դերը կփորձեր ստանձնել և որ պոլսահայ գրականությունը խորթ կնկատեր հայ ժողովուրդին, ամենեն տիպիկ ներկայացուցիչներեն մեկն էր այդ «խորթ» գրականության, թեև իր բնակությունը Պոլսո մեջ չըլլար, այլ Մալկարայի մեջ, որ օսմանյան մայրաքաղաքին քիթին տակ՝ նույնքան հեռու էր Հայոց Աշխարհեն, նույնքան հեռու՝ հայ ավանդություններեն, հայ հեթաթներեն, հայուն հողեն ու ջուրեն:

Հարությունյան՝ Պոլսո հայ գրողներուն ունե մեկեն ավելի՝ ֆրանսական գրականության հովանիին տակ կշնչեր: Ան իր ներշնչումները կթաղեր առավելապես ֆրանսացի հեղինակներեն, ու իր գրական տեսակետներուն կովանր ֆրանսալի գրական հոսանքներն էին: Իսկ իր գրելու ոճը ֆրանսականը կհիշեցներ:

Թյուրիմացություն էր նույնպես կարծել, թե գավառը պիտի կրնար խարխա հանդիսանալ արևմտահայ գրականության՝ եթե տիտան մը հասուննար իր ծոցեն: Թլկատինցին, օրինակ, բացառիկ էր իբրև տաղանդ, բայց ի վիճակի չէր իր հովանին տարածել խարբերդի սահմաններեն շատ հեռու:

Չմոռնանք, հետո, որ իբրև հարադատ բերք Թլկատինցին կամ Մշո Գեղամը տալե ետք, ամբողջ երկու տասնամյակ ամուլ մնաց գավառը իր մայրամուտին հասնելե առաջ: Զարդարյան կամ Որբերյան գավառինը չմնացին: Գալուստ Անդրեասյան հրապարակագրի վերածվեցավ ավելի, Արտաշես Հարությունյան ոչինչ ձեռք գավառեն իր արձակին կամ ոտանավորին մեջ, Հովհաննես Գաղանճյան, Տիգրան Չիթունի կամ Կարապետ Գաբրիկյան բանասիրական մարդանքներե անդին երբեք չանցան, իսկ Կորյուն Մկրտչյան, Գաբրիել Պեշկեթյան կամ Տիգրան Ամիրջանյան հատկապես ճիշեր եղան լոկ: Ավելի նոր օրերու՝ եթե Մեծարենց պատկերներ քաղեր գավառեն, և Օշական իր տիպարները, անոնք լոկ ավիշ է որ կբերեն մայրաքաղաքի հոգնած ընդերքին:

Եթե գավառը անկարող եղեր էր արդարացնել իր հավակնությունները, չմոռնանք սակայն սրահը, զոր հայ կյանքը և անոր հետ նաև հայ գրականությունը կապեր: Համիտ կաշկանդած էր մարդոց հոգին, իր մուկեցությունը ցույց տալով մանավանդ գավառին հանդեպ: Մայրաքաղաքը փակված էր գավառին առջև, իսկ գավառը կխեղդվեր ինքն իր մեջ, ամեն կենսունակություն կորսնցնելով տակավ: Մտավոր վերելքի մը մասին խորհելու ուժը չուներ: Այլ ուր մնաց արևմտահայ գրականությունը «Պոլսո հոսհոսական բռնակալության» լուծեն ազատելու մասին խորհիլ: Արտաշես Հարությունյան հետագային կըսեր, թե «հայկական մեծ կոտորածներու շրջանին, գրական հրապարակը ամայացած էր: Հայ տաղանդին աղնվագույն տարրերը ցրված էին տարագրության գիրկը: Իրականորեն, Պոլսո մեջ այլևս անչիդ խլրոտում մը, պարզապես՝ կիսալուս կենդանության նշան մը միայն գարելի էր հաստատել: Այդ միջոցին էր, որ բոլորովին կեղծ, անհարադատ ու սալոնակուն անարյուն գրականության մը իբր հակազդեցությունը կարծարծվեր «վաղվան գրականության» հարցը, որուն առաջին մատնանշումը տարիներ առաջ ըրած էր Արփիարյան, որուն գաղափարը մասամբ մշակված էր Գալուստ Անդրեասյանի նման ամուր միտքի մը կողմե, և զոր իր վերջնական տարավին ներքև կրանաձևեն քանի մը գավառացի եռանդոտ գրողներ:

Ավելի ուշ՝ 1913-ին, գավառի գրականութեան հարցը անգամ մը ևս խոսքի նյութ եղավ Պոլսո մէջ: Ոչ գրավե՞ւ էր բացված այս անգամ, ո՛չ ալ Պոլիսն ու գավառը դեմ դիմաց ելեր էին զիրար ուրանալու, զիրար նախատելու համար: Արեւմտահայ մտքին լավագույն դեմքերն հավաքված՝ կսկանծացներին արեւմտահայ դրականութեան փառքերէն մեկը: Անոնց ճառերուն մէջ նույն այդ գրականութիւնն էր, որ կաստվածանար հանձին անոր ամենէն զմայլելի վարչապետներէն մեկուն, Ռուբեն Զարդարյանի. որուն գրական ստեղծագործութիւնը հաջողեր էր իր մէջ ամփոփել Պոլսո հայերէնը նոր օրերու իր շքեղութեամբը, և թարմ շունչը, զոր գավառէն հետը բերած էր ան¹⁰:

Իր բացման խոսքին մէջ այս տողերու գրողը կըսեր թէ.

«Գրագետը, որ մեր այսօրվան գրական ասուլիսին նյութը կկազմէ, Ռուբեն Զարդարյանն է, մեկը թրքահայ վերածննդյան դեմքերէն՝ որոնք 1890-էն ասդին նոր շունչ մը բերին թրքահայ գրական կյանքին մէջ, ոմանք իբրեւ ներկայացուցիչները եվրոպական մտքին և ուրիշներ՝ ցեղին երակներէն քաղելով պատվաստը վերածնվող հայ գրականութեան: Զարդարյան կպատկանի այս վերջին խումբին և Թլկատիցիին հետ մեկտեղ կկազմէ գլխավոր առանցքը գավառական գրականութեան շարժումին, որ 1890-էն սկսած արդեն, հետը հետեւ ուռնացավ, դառնալով վերջապէս գրական որոշ ու կենսունակ հոսանք մը»:

Օրվան բանախոսներէն մեկը Զապել Եսայանն էր: Զարդարյանը վերլուծելէ առաջ իր գրական դիմագծութեան մէջ ան Պոլսո գրական սերունդին սրտի տուրքն էր, որ կուտար գավառին, հանձին անոր ամենէն խանդավառ կեդրոններէն մեկուն՝ Խարբերդի, որուն ամենէն հարազատ մեկ ներկայացուցիչն էր եղեր Զարդարյան: «Անոր գրականութիւնը մեզի համար միշտ եղավ գերագույն բուրմունքը այն ժողովուրդի հոգիին, որուն մեկ հարազատ զավակն էր ինքը և իր միջոցով հաղորդակից եղանք հեռավոր և մեզի անծանոթ արշունակիցներու տվայտանքներուն, պղտիկ ուրախութեանց և մեծ վիշտերուն, ժպտի ու գոհունակութեան խուսափուկ պահերուն և հարատեղ թշվառութեան, մեկ խոսքով անոնց ամբողջական կյանքին հուզումներուն և հույսերուն»:

Բայց ոչ ոք այնքան չերմ պիտի ըլլար գավառի և անոր տաղանդավոր ներկայացուցիչներէն մեկուն ընծայված մեծարանքի այս տոնին բանախոսներէն, որքան Երվանդ Սրմաքեշխանլյան: Պոլսո գրական նոր սերունդին խանդաղատանքը կբերեր ան ևս դեպի գավառն ու իր գեղեցկութիւնները:

«Մեզի համար գավառացի գրագետը ինքնատիպ անձ մըն է, վասնզի գավառը երանելի աշխարհն է ամեն տարաբնակ հայու համար. անիկա սրբազան բան մը ունի իր մէջ: Անիկա ոչ միայն մեր մտքին, այլ մեր սրտին, նամանավանդ մեր զգայնութեանը վրա կզորե խորապէս: Անոր առջև մենք տկար ենք, տկար՝ բառին աղնվագույն իմաստովը: Գավառէն բերված քաշի կտոր մը զգլխիչ հիշատակ մըն է, հողի գուղձ մը՝ նվիրական հուռովք մը. ծաղիկ մը, պտուղ մը կփղձկեցներ և հառաչել կուտան մեզ. կհուղվինք, կսարսըռանք անոնց տեսքին առջև՝ այնքան սովորական սակայն. գավառը հեռավոր ու խորհրդավոր աշխարհն է, որուն կձգտին բոլոր մեր ըզձանքները. բոլոր մեր իտեալները: Գավառին երգը ամենէն քաղցրն է, հոգեցունցն է մեզ համար, իր էն նախնական ու պարզ ձևին մէջ իսկ: Իսկ երբ գրականութիւնն է

10 Տե՛ս «Գրական ասուլիսներ», Դ. Ռ. Զարդարյանի «Յայգալույսը», Կ. Պոլիս, 1913:

որ անկե կուգա մեզի, մեր հիացումը չափ շունենար, մանավանդ երբ ան կհատկանշվի այնպիսի աշխատանք, ինքնադրոշմ ու բարձր ձևով մը, որպիսին է Զարգարյանի գրականությունը:

Տեսակ մը պատգամ էր, զոր արտասանեց Կոմիտաս այդ օրը իր փակման խոսքին մեջ: Ըսել է՝ հետո թե պեղարվեստը ազգի մը արևն ու կենսունակության ջիղն է՝ Կոմիտաս կըսեր թե «մեր ազգին մեջ այդ կենսունակության ջիղը խաթարված է, որովհետեւ, մայր երկրեն հեռացած, դաղթավայրերու մեջ է որ կուզենք վայն բխեցնել: Գաղթականությունը չէ որ սնունդ պիտի տա զրսկանության, գեղարվեստին, այլ բուն իսկ հայրենի հողը, ուրկե հեռացած է ան:

...Ցարդ գավառը մեր աչքին լծորդված է խավարի հետ: Մենք մեծ մասամբ գավառը կճանշանք իր տղիտությունով ու հետամնացությամբ: Բայց գավառը իմ աչքիս առջև կպատկերանա իբրեւ սրբավայրը հայ գեղարվեստի նշխարներու: Հոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին շրթներուն վրա, հայ գուլթանը, հայ գեղջուկը՝ իր արտին ու մաճկալին հետ. ու քարերն անգամ նվիրականություն մը կհիշեցնեն ինծի: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը. հոն են շեշտերը մեր գեղարվեստին, և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, ուրկե մենք այդ գավառը կդիտենք իբրեւ խավարի վայր:

...Ահա մարդ մը մեր առջև, արժանի ամեն հարգանքի: Մարդ մը՝ որ գավառի շունչը տվավ մեզի: Նշենք այդ շունչը, մանավանդ զորք երիտասարդներ, շնչեցեք վայն երաժշտական շունչով մը, որովհետեւ ան գավառեն կուգա. մեր հայրենի բնավայրեն, որուն արևը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ և օդը կենսատու ու պայծառ, և որուն վրա կսավառնի գեղեցկությունը: Շնչենք այդ գեղեցկությունները»:

Ըսինք ու կկրկնենք թե «վաղվան գրականության» անունով մղված բանավեճը ավելի շատ լրագրական աղմուկ էր, քան լուրջ գրական շարժում: Բխած գավառ ապրող քանի մը մտավորականներու մոլորությունեն, արևմտահայ գրականությունը գավառի ավիշով պատվաստելու գեղեցիկ մտածումին հետ՝ չափազանցության տարած էին իրենց հավակնությունները:

Ոչ ճառերու, և ոչ ալ գրավեճերու կարիք ունեցավ արևմտահայ գրականությունը իր վերջնական դիմադրությունը գտնելու համար: Կյանքը ինքն էր որ ստեղծեց վաղվան գրականությունը: Ու ատոր համար հարկ չեղավ, որ արևմտահայ գրականությունը գավառի մեջ կեդրոն ստեղծե իրեն: Գավառը ինքն եկավ Պոլիս, ձուլվելու համար անոր: մեջ իր նոր վերելքի պահուն և արևմտահայ գրականության երբեք մեղքը չէ, եթե իրամրեցավ իր փթթումին մեջ իսկ: Մեծ փոթորիկն էր, որ պայթեր էր հանկարծ՝ ամբողջ շորս տարի հոգիները ամլացնելու համար, և երբ դինադադարին վերնձյուղման ճիգեր կփութն հայ միտքը՝ անգամ մը ևս կխորտակվին այդ ճիգերը՝ իրենց փշրանքները նետելու համար աշխարհի բոլոր հովերուն, բայց աշխուժանալու համար վերստին օտար ափերու վրա: Արևմտահայ գրականությունը կփորձեր շնչել հայ սփյուռքին մեջ:

Երբեմնի հայ գավառը ևս իր պարտքը լրիվ կատարեց: Հայ սփյուռքին ավիշ տվավ և ինքրի իր ծոցեն եկան շատերը այն բարի անուններեն, զորս հայ սփյուռքը խառնեց հայ գրականության:

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Проф. А. Ч. СИРУНИ (Бухарест)

(Резюме)

В статье дана краткая история литературной борьбы в западно-армянской литературе с 1890-х годов по 1915 г. Ее вели некоторые писатели, жившие в различных западноармянских провинциальных городах — А. Арутюнян, Р. Зардарян, Р. Ворберян и другие. Они защищали точку зрения, согласно которой западноармянская литература, развиваясь в Константинополе, вдали от деревни и родного народа, и в то же время находясь под сильным влиянием французской литературы, не раскрывает жизнь и обычаи армянского народа, его чаяния и что необходима такая литература, которая отразила бы истинную жизнь и национальный характер народа.